

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ

Պ. ՓՈՐՈՍՍԵԱՆ

ՄԱՍԿ ԿԱՅ ՈՐ ՓԻ Է ԿՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԻ ԵՒ ՈՂԴՆԵԼ ԱՐ

ՏՆՕՐԻՆ. ԱՐՇԱԼՈՅՍ ԻՐԱԳՐԻ

ԳԱՆՏԻՔ (Group a Turque)

E. TOROSSIAN


Direc. propr. du journal arménien

ARCHELOUICE

LE CAIRE (Égypte)



Poste-restante



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵԲՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱՅ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՇԱՐԱՅ

Տարեկան, ողջ դահկն. 60

Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿՐԵԹ

Տարեկան Ֆրանկ 20

Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԿ Է

ԵՒ ԹՎԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ

Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած

գրութիւնք եւ չ'են թուիր:



ԱԶԳԱՐՈՒԹՅՈՒՆՔ

Կանխիկ վճարել են

ՄՈՒՑՈՒԱԾՆԵՐԸ

Գահիրէի հայոց թղթատիրաց ընկերութեան կողմէ՛ ի նմանատ ընթաննալուրկ որբերոց կազմակերպուած այս երեկոյեան ներկայացումը, անգամ մը իւր կուգայ թունդ հանել և վերիվայր ջրի ըտը թմրած մտքերը և հանգամանքը ունի, վերջին տարիներու ամենաուսկալի աղէտները՝ իրենց անպատմելի ահազնութիւններով, մեր մտքը ու երեւակայութեան առջև պատկերացնելու:

Ատենէ մը ի վեր տիրող անշարժութիւնը, շատեր թերևս անտարբերութեան քառսին մէջ մղեց. և սկսան մտածել թէ՛ ժամանակին անդառնալի հոսանքը, իր սլացող թւերուն վրայ առած և անհետացուցած է, գաւառներու խորքերուն մէջ հեծեծող անթիւ և անհամար փոքրիկներուն սիրտը ծակող վշտերը. և միանգամայն թեթևացուցած է՝ ծնողքէ, պատառիկ մը հացէ, ինչպէս նաև բարոյական սնունդէ զուրկ անոնց անցուցած սարսազդեցիկ կացութեան ծանրութիւնը. սակայն Որբատիրաց ընկերութեան այսօրուան ձեռնարկը, ի ձայն փողոյ կ'ազդարարէ մեզ թէ՛ իրաց կացութիւնը գրեթէ իր նոյնութեամբ կը շարունակուի և ո՛չ թէ ժամանակի հոլովումն է որ ըստ ինքեան կրնայ դարմանել զայն, այլ մեր առատաձեռնութիւնը և գթութիւնը պէտք է միացած ըլլայ անոր հետ: Ուստի կը սարսի և կը ջնջուի մեր բոլոր էութիւնը. և մեր համակ ուշադրութիւնը կը սրուի այն զրկեալ ու լքեալ անմեղաներուն վրայ:

Արդարև պէտք չէ՛ որ անոնք մեզմէ մոռցուին. Եթէ նոյն իսկ Որբատիրաց ընկերութեան պատուարժան վարչութիւնը փութկոտութիւն չ'ունենար այսօր ի մի վայր համախմբուելու կոչն ընել մեզ՝ տիրող ընդհանուր չարիքին վրայ մէկ սիրտ մէկ հոգի խորհրդածելու համար, մենք դարձեալ արժան չէ որ մեր մտքերէն դուրս վանենք բարիք գործելու երջանկութիւնը՝ և իղձի հանդարտութիւն վայելելու գոհունակութիւնը: Իսկ երբ այդ միջոցը կը հայթայթուի մեզ ուրիշներու կողմէ՛. . .

Եգիպտաբնակ հայ գաղութը, թէև ունի իր մէջ բարեբարել խոյս տուողներու բաւական կարևոր թիւ մը, սակայն միև կողմանէ ընդհանուր տեսակէտներով շատ

մը ապացոյցներ տուած է դէպ ի բարեգործութիւն շարուած ուղեղներով հակիրճ և կրնանք ըսել, ամենէն հայաշատ կեդրոններէն աւելի արդիւնաւորապէս նպատակ գիտցած է՝ առիթը ներկայացած պահուն. ուրեմն անպեղծ չէ մտածել թէ՛ այդ վերջին պարագային մէջ ալ, շատ աւելի սիրով և յօժարակամ պիտի փարի ու քաջալերէ սկսուած ձեռնարկը, որ ընդհանուր առի միացողներուն, որբիկներուն, անտանելի կացութիւնը մասամբ մեղմելու և զանոնք սակաւ ինչ միջթարելու սուրբ գործին կը վերաբերի:

Կ'արժէ՞ որ այդ ողորմելի էակները վայրկեան մը իսկ մեր լուրջ ուշադրութեան առարկաները ըլլալէ դադրին:

Կեանքը արդարև դժբաղդութիւններու շղթայով մը հիւստած է գրեթէ ամենուն ալ համար. և այս ցաւոց հովտի վտարանդիներն, այդ դժբաղդութեանց ստինքէն իրենց ինկած բաժինը անյադարար կը ծծեն. սակայն մեր ծնողազուրկ որբիկները, կեանքի այդ դառնութիւններէն շատ աւելի դառն թափակի մը պարունակութիւնը մինչև յետին միւրը կը քամեն, չ'եղբէ շատ հեռի. . . Կարելի՞ է այլ ևս անտարբեր գրտնուիլ և փութկոտութեամբ չ'պտասխանել Որբատիրաց ընկերութեան եռանդալից վարչութեանը մեզ ուղղած հրաւերին:

Եգիպտահայոց թերի կողմերը անաչառօրէն ըննադատելու և հարուածելու ատեն իսկ, կարող չենք չ'խոստովանել թէ՛ Փարաւններու երկրին հայ գաղութը, ըլլայ Գահիրէ և Աղեքսանդրիա, ըլլան Չակաղիկ, Խպրահիմիյէ, Մանսուրա և այլ արուարձաններու մէջ հաստատուած, միշտ ամեն տեղերէ աւելի առատաձեռն գտնուած են օրինաւոր գիմումներու առջև և պատրաստակամութիւն ցոյց տուած են օժանդակելու, հոգալու, նպաստելու, սնուցանելու և հազուեցնելու քաղցրործութեանց մէջ: Ասոր օրինակները բազմաթիւ են. և պարծանօք ու սրտի անհուն գոհունակութեամբ յիշատակելու պարտական կ'զգանք ինքզինքնիս:

Այս պարագային մէջ, կրնանք ուրեմն մտածել թէ՛ Որբատիրաց ընկերութեան այսօրուան ազգօգուտ ձեռնարկը Եգիպտահայոց քաջալերութեանը չ'արժանանար. և անոնք իրենց բուղի սրտին ապացոյցը չեն տար

այս առթիւ ևս, նիւթապէս օժանդակելով այս նուիրական ձեռնարկին:

Ամեն գեղեցիկ վարդ իր փուշերն ունի, ուրեմն ինչո՞ւ տարակուճիլ թէ՛ Եգիպտահայ աշխու մասին մէջ ալ, կրնան խառնուած ըլլալ չարսիրտ, նախանձոր և սևհոգի արարածներ, որոմներ: Այդ քննամիտ արտ՝ զնա: Կ'ուզենք վստահ ըլլալ թէ՛ այդպիսիները չ'պիտի կարենան վճատեցնել Որբատիրաց վարչութեան անգամներն, որոնք գործունէութեամբ և այլ օրինակելի առաւելութիւններով օժտուած ըլլալով՝ հանդերձ, ունին Ատենայեա մը՝ որ անխնայ և հոգեպէս նուիրուած է իրենց աշխատութիւնը թեթևցնելու, և որ միանգամայն ամենահոգ աշակից մ'է իրենց ամենէն գեղեցիկ արատանելի գործերուն մէջ: Ուրեմն յիշենք վերջու շե՛նք մոռցուածներն:

Հարկ է այժմէն զոհողութիւններ ընել, ապագային չ'զոհուելու համար:

ԹՈՒՍԿԱՆԻ ՍԽԱՆ ՄԸ

Մեր նախորդ թուով հրատարակուած կիպրոսի կրթարան-Որբանոցի համար եղած նուիրատուութեանց Ա. ցուցակին թուականը, փոխանակ Ապրիլ 3 ըլլալով՝ Մարտ 1 նշանակուած էր սխալմամբ:

ՆԱՄԱԿ

ԱՌ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՍ

Մեր մէջ սովորութիւն եղած է լուսթիւն պահել այն կարգ մը խնդիրներուն վրայ, որ խիստ կենսական են. կեղծ համեստութեան մը քողին տակ: Ծնողք կը կարծեն թէ՛ վայել չէ՛ խօսիլ իրենց զաւակներուն հետ այն փորձութիւններուն վրայ, որոնց կենթարկուին երիտասարդները իրենց կենաց ամենէն փափուկ ժամանակամիջոցին մէջ. և կամ թէ՛ լուսթիւնը կարծեն երիտասարդները անտեղեակ պահել այս փորձութիւններէն: Բայց հայրեր կը սխալին այս մասին: մէն մի պատանի կը սորվի ուշ կամ կանուխ այն ամեն բաները որոնցմէ գուք հեռու պահել կուզէիք, եւ թերեւս այնպիսի ընկերներէ որ իրեն աւերման պատճառ կըլլան: Արդարեւ հաճելի չէ ծնողքի մը հայրը այս գործը ստանձնել: և ուստի յաճախ ընդհանուր բառերով զինքը զգուշացնելով գոհ կըլլան: Ան հասարակ կատարուի թէ՛ այս տեսակ չարիքները յիշելով աւելի կը թելագրենք քան կը խոստովանենք. աւելի կը բազմացունենք քան կը նստալիցսունենք: զանոնք, Բայց վտանգի երկիւղը և գիտակցութիւնը կ'ստիպեն մեզ անտես ընել այնպիսի առարկութիւններ եւ որոշ ու պարզ բառերով զգուշացնել մեր գեռահաս երիտասարդութիւնը: Այս խնդրոյն

վրայ պէտք է խօսիլ եւ գրել այնպիսի մանրա- մասնութեամբ եւ շեշտով, այնպիսի փափկա- նկատութեամբ եւ շարժառիթով որ սոսկում եւ սպառնալից յարուցանէ այս չարեաց դէմ:

Ասով չենք ուզեր ջատագովել էմիլ Զօլայի, ֆրանսացի վիպասանին, « Գեղարուեստի մէջ ի- րականութիւն » վարդապետութիւնը: Զօլայի դպրոցին պատկանող հեղինակներն արդարեւ կը ստուերագծեն խիստ իրական բառերով այն չա- րիքները, որ մարդկային ազգին անէծքն եղած են, սակայն զայն դատապարտելու համար խօսք մը չունին: Անոնց շարժառիթը կասկածելի է: Խիստ փայլուն գոյներով նկարագրելի վերջ, չարիքին մութ կողմը երեւան չեն հաներ: Միլտոնի «Կո- րուստել գրախոսին» մէջ սատանայապետը այնպէս կը նկարուի մեր առջեւ որ ընթերցողին առաջին տպաւորութիւնը ասոր նկատմամբ հիացում եւ սքանչացում կ'ըլլայ: սակայն այս երկար չի տեսեր:

Գիշ մը ասգին, Միլտոն կը թուէ անոր դիւա- յին արարքները եւ մեր պոզանքը եւ ատելու- թիւնը կը գրգռէ այս ճիւղին դէմ: Զօլայեանները սակայն կը թողուն գործոյն երկրորդ մասը որ իրենց իսկ տպաւորութիւնները գործեն կենաց շաւղին մէջ առաջին անգամ մտնողներուն վրայ: Իրական վարդապետութիւնը այն ատեն օգտակար կ'ըլլայ, երբ անոր սկզբնական նպատակը հրահան- գել, զգուշացնել եւ սարսափ ազդել է: Առաջ- նորդը պէտք է, իրեն Մենտոր, բռնէ պատանուոյն ձեռքէն եւ այն ծաղկազարդ ու զիւթիչ պարտե- զին մէջէն անցնելէն վերջ, անոր միւս եզրերը մտնել մարդոց ոսկորներով լի վիճը ցոյց տալ: Թատերաբեմին վրայի հրապուրիչ տեսարաններուն ակնաստեռ ընելէն յետոյ, պէտք է յանկարծ վա- րագոյրը մէկ կողմ քաշել եւ մահը իր զազիր ժա- նիքներովը ի յայտ բերել:

Գահիրէի հայ երիտասարդութիւնը մասնաւոր կերպով կը կարօտի այսպիսի խրատներու: Մեծ հակապատկեր մը կայ մեր երկրին եւ Գահիրէի մէջ: Հոն կեանքը խաղաղ եւ անգործ է, հոս բազ- մադէպ եւ աղմկալից: Հոն նահապետական սովո- րութիւնները դեռ կը տիրեն եւ ծերունին կը յարգուի: հոս աղատութեան միայն ըմբռմամբ չէ թէ միայն մեծին ու պզտիկին, չափահասին եւ դեռա- հասին միջեւ եղած տարբերութիւնը վերցած է, այլ նաեւ սղէտ եւ անփոթ երիտասարդներ մե- ծատութեամբ կ'անարգեն փորձառուներուն ա- ռողը հրահանգներն իբր հինցած եւ ատենը անցած գաղափարներ: Հոն ամբողջ մթնոլորտը յարգանք, պակասանք, համեստութիւն եւ ամօթխածու- թիւն կը բուրէ: հոս լրբութիւն, անամօթութիւն եւ վաւաչոտութիւն: Ուստի երբ անփորձ երիտա- սարդ մը, որուն նկարագիրը տակաւին չէ կազ- մուած, յանկարծ կը փոխադրուի Հայաստանի մարտը եւ առողջ մթնոլորտէն Գահիրէի պէս ապականալ միջավայրի մը մէջ, անոր անկումը անխուսափելի կ'ըլլայ եթէ զօրաւոր ձեռք մը չը կարկատի զայն փրկելու: Իրենց երկրին մէջ ծա- նօթ եւ լաւ վկայեալ քանի երիտասարդներ յօր- ուածագիրս կը ճանչնայ որ այժմ Գահիրէի վա- տանող միջավայրին մէջ ապականութեան եւ ան- բարոյականութեան ցեխին մէջ կը շաղխին:

Գիտում կրնենք Գահիրէի հայ երիտասարդու- թեան « Արշալոյս » ազգօգուտ թերթին միջոցաւ զգուշանալ եւ զգուշացնել մերիններն այս մահա- ցու չարիքէն: Այս նպատակին համար վայրկեան մը կանգ առնենք Մայրաքաղաքիս ամենէն նշա- նաւոր, բազմամարդ եւ եւրոպականացած փողոց- ներէն միոյն անկիւնը եւ դիտենք Ո՛հ, սոսկալի տեսարան:

Օրն արդէն տարածամած է թէ եւ գիշերուան մութը տիրած է, սակայն խանութներուն ելեք- տրական լամպարները եւ փողոցներուն օդային կազի լապտերները, առատ բայց տփոց մտեւական լոյս մը կը սփռեն: Ահա երիտասարդ մը կուգայ փո- ղոցին միւս անկիւնէն: Յայտնի է թէ գործի տէր մարդ չէ: անոր շարժումները դանդաղ եւ քայլերը անհաստատ են: Կը քայլէ, բայց քայլուածքն աւելի թարթափանք է քան յառաջացում: Այս երիտա- սարդը պակասամիտ է: ունի տկար կամք մը եւ մարմնովն միտք մը: սակայն իր մասնա- լոր տկարութիւնը կը կայանայ սա իրողութեան մէջ թէ նա ինքզինքը կարող կը կարծէ դիմադրե- լու փորձութեան եւ ուստի անկէ փախչելու չ'ա-

ճապարհեր կը նմանի այն յիմարին որ կը պարծե- նայ թէ կրնայ մատուցներուն ծայրերէն կախուել անողունդի մը եղերքն ի վար:

Ուրիշ մը որ նուազ յանձնապաստան է պիտի չ'յանդգնի վտանգին այսչափ մօտենալ: բայց այս երիտասարդը զիտող ամեն անձ կրնայ գուշակել թէ իր անձին վրայ ունեցած բոլոր սնտոյի համա- րուաներովը հանգերձ, փոթորկալից ծովու մը ա- լեաց վրայ խաղալիք դարձող նաւակի մը նման է, փորձութեան ճիրաններուն մէջ:

Ճամբուն վրայ յանկարծ մեղմ եւ հմայիչ ձայն մը իր ուշադրութիւնը կը գրաւէ: Կնոջ մը ձայնն է այս որ իր տունէն դուրս եկած է ան- զգոյշ եւ անփորձ թուղուններ որսուլու: Անոր կեր- պարանքն եւ հանդերձը կը մատնեն զինքը, եւ երիտասարդը փոխանակ անկէ փախչելու, հեռա- նալու, ականջները խցելու, հաճոյք կղգայ անոր մօտենալէն եւ քաջութիւն կը սեպէ այսպիսի դիրքի մը մէջ գտնուելն առանց յաղթուելու: Իր արիւնքովն փորձը կուզէ տալ փորձութեան դի- մադրելով: Կինը կը մօտենայ կարեկցական նայ- ուածքով, կեղծ ժպիտով, բաց դէմքով եւ բոց սրտով: Անոր ձայնը յուզիչ եւ սրտաուռ է եւ անոր մէջ կայ այնպիսի եղանակ մը որ տկար երիտասարդին սրտին թելերը կը թրթռացունէ: Անիկայ անզուսպ եւ վայրի արարած մըն է: միշտ կը ցանկայ այն բանին որ արգելուած է: Ընտա- նեկան անդորր կեանքը անտանելի եւ անոր հա- մար փողոցին յարափոփոյս եւ աղմկալից տեսա- րանները միայն կրնան հանգարտեցունել իր խոռ- վեալ միտքը: Որչափ տարբեր այն գաղափարական վիճակէն որուն համար ստեղծուեցաւ կինն: Այն կանացի բնութագրութիւնը որ եթէ լաւ գաստիրա- կուած ըլլար պիտի զարգարէր քաղցրաբոյր ըն- տանեկան յարկ մը, նուիրական սիրոյ անսպասելի աղբիւր մը հոսէր, հոս աղարտած եւ խանգարած է բոլորովին Կիրքերը թունաւորուած, կորովը խտացած եւ ոչոք սպառած է: Անոր հրապոյր- ները կեղծ են: նա միշտ փողոցներուն ստուերա- լոր կողմէն կը քայլէ եւ մթին անկիւնները դա- րանամուտ կ'ըլլայ: զի մի գուցէ լապտերներուն լոյսը անոր երեսին վազելի տեղութիւնը եւ աչքերուն խորամանկ շարժումները երեւան բերէ Շպարին եւ պճնապաճոյճ հազուստին տակ պառա- լկտի վճուկ մը պիտի գտնես: անոր աչքերը աղօտ եւ նեւթ են բացի այն ժամանակաւոր բոցէն զոր կը բանկեցունեն իր ցոփ խորհուրդներն: ձայնը որ կը մնջէ աղանոյ մը պէս, եւ կը ծփայ առուակի մը կոնակներուն նման կը հեղձնու յուսահատու- թեան հեծեծանք մը: Իմաստուն երիտասարդը արգահատելի զգուանքով կը նկատէ զայն: Իսկ այս յիմար երիտասարդը կզգածուի անոր կեղծ ու պատիւր ձեւերէն: Անոր տկար հասողութիւնը ան- միջպաէս կը յաղթուի կնոջ շողքորթ լեզուէն եւ իր անմարտ սիրտը չ'կրնար նշմարել քաղցրա- հաճոյ խօսքերուն մէջ ի թոյնը:

(Շար.) Մ. Յ. Գ

Ի ՆՊԱՍՏ
ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ԿԻՊՐՈՍԻ ԿՐԹԱՐԱՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ
ԱՅՍ ԵՐԵՎԱՆԻ ԵՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ
ՕՐԵՐԱ ԽՏԻՎԵԱԼԻ ՄԷՁ

Տնօրինութեամբ համալաւոր ողբերգու
ՏԻԱՐ Թ. ՅԱՍՈՒԼԵԱՆԻ

ՕԹԷԼԼՕ
Թուրքերէն լեզուաւ
Ողբերգութիւն 3 արար և 6 պատկեր
ՇԵՂԻԱԿ ՅԵՅԵՍԻՐԻ
Կատակերգութիւն 1 արար թրքական կեանքէ
Ձիւտորականնուագածուաց խումբը պիտի նուագէ
միջնաբարներուն:

Տիկին Պերճիկ և Տիար Սմբատ Թէր- ղեան, որ Պուլկարիայէն նոր հասած են քաղաքս, պիտի մասնակցին սոյն ներկա- յացման:

Կը սիրենք յուսալ թէ՛ հայ ազնիւ հասարակութիւնը, սոյն ներկայացման նպա- տակին վեհութիւնը ի նկատի ունենալով, պիտի յօժարի իւր ներկայութեամբ պատ- ուել՝ և Որբասիրաց վարչութեան ջանքերը արդիւնաւորել:

Պատ. Տնօրինութիւն «Արշալոյս»ի

Գործ. Ժողովս կը խնդրէ հրատարա- կել Պատ. թերթիդ մէջ, հետեւեալ նու- րատուութիւններն, զորս ամենայն շնորհա- կալութեամբ ստացած է Որբասիրաց ընկե- րութիւնս՝ վաղը գիշեր ներկայացուելիք թատրոնին առթիւ:	
Վեամաշուք Եագուպ Արթին փաշա	300
" Հապիպ Պէյ Լուծֆալլահ	97,50
Ալն. Տիար Բարթիկ Նահապետեան	97,50
Պ. Պ. Եղբարք Սօսիտիս	97,50
Մեծ. Տիար Սարգիս Մելիքեան	48,75
" " Ս. Պիւլպիւլեան	23
" " Արմենակ Մալումեան	10
Գումար	676,25
Ի դիմաց Գործ. Ժողովոյ Որբասիրաց ընկերութեան	
Վ. Ատենազարի Ատենապետ	
ԼԵՒՈՆԴ Ա. Մ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	
Գահիրէ, 6/4/900	

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐԱՆՍՎԱԼ. — Զօրավար Կաթաքըի մասին Լոնտրայի մէջ տարածայնութիւն կայ թէ՛ խիստ ծանր հարուած մը կրած է, և քանի օրերէ ի վեր անոր մասին ո՛ր և է տեղեկութիւն չկայ:

Հրամանատար Օլիվիէէն, Պէթուիլի չըջկանները զօրավար Կաթաքըի կրած պարտութեան և խորտակման մասին, հե- ռագրական գործակալութեանց կողմէ հա- նուած տարածայնութիւնները, Ուար օձիւր ոչ կը հաստատէ և ոչ ալ կը հերքէ: Սա- կայն և այնպէս, Ուար օձիւր կողմէ կ'ստու- գուի թէ՛ քանի օրերէ ի վեր Կաթաքըի մասին ո՛ր և է տեղեկութիւն առնուած չէ:

Ամենուրեք լուր կը չըջի թէ զօրավար Կաթաքը իւր սպայակոյտին հետ գերի ին- կած է և անգղիացիները 12 թնդանօթ կորսնցուցած են: Մարտի 23էն ասդին գոր- ծակալութիւնք հերքողական կամ հաստա- տական լուր մը չեն սար այս պարտութեան մասին:

— ԵՐԿՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ. — « Տէյրի Նիւզ » թղթակիցը, Պէժմֆօնթայնէն կը գրէ թէ՛ երկու նախագահները Գրիւկէր և Սթէյն Ապրիլ 4ին Գրուշթատի մէջ իրարու պիտի հանդիպին արդի կացութեան վրայ վիճա- բանելու համար:

— ՍԹԱՆՏԱՐՏ ցաւելով կը հաստատէ թէ՛ Պօէրները այնչափ վհատած չեն, որչափ ոմանք կարծել կուզեն: Պօէրներու զօրա- գունդերը ազատ պետութեան հիւսիսա- կողմը ինչպէս նաև Նաթալի մէջ անվթար կը մնան կ'ըսէ, և ըստ ամենայն հաւանա- կանութեան՝ այնչափ մարտնչելու պատրաստ քան երբէք:

— ԱՍԵՐԻԿԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ. — Պօէրներու բարեկամ դրամատէրներ Փօր-

ԾԽԱՍՈՑԻ ԵՒ ԵԿԵՊՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՄԵԾԱՔԱՆԱԿ ՆԵՐԱՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱՍՈՒԹԻՒՆ

ՏՈՒՏԵԱՆ ԱՍԼԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ.

Պատիւ ունին ծանուցանել թէ իրենց Պապ-էլ-Հատիտի նորահաստատ գործարանին մէջ աշխատութիւններն սկսած են եւ կը պատրաստուին ընտիր ծխախոտ եւ սիկարէթներ :

Տիար Կ. Տուտեան, նախկին գլխաւոր պատրաստիչ (հարմանճի) Մաթոսեան ընկերութեան տան, այս անգամ իւր պաշտօնը թողած եւ իր անձնական հաշւոյն մեզի հետ ընկերացած ըլլալով, իւր մասնագիտութեան եւ երկարամեայ փորձառութեան շնորհիւ, մեծ խնամքով պիտի պատրաստէ ծխախոտներ թէ՛ ձեռքով եւ թէ՛ մեքենաներու միջոցաւ կտրուած :

Վաճառման կեդրոնագրի

ԽԱՌՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐԵՒԻԵԼԵԱՆ ԴՐԱՆ ԴԻՄԱՑ

ԱՅՍՊԱԷԼ-ԽԱՏՐԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՑ

«Համալսարան» գիտական և գրական մասնաթերթի Մարտ ամսոյ 3րդ. թիւը ստացանք :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Պատրաստութիւններ (Յովհ. Շաւարշ)
- Խմորումներ (Գարեգին Մեծատուրեան)
- Դաստիարակիչ գիտութիւնը (Նշան)
- Գրական էջեր (Միսաք Պաշտասարեան)
- Պիլիճը-Պատմական (Գեորգ Մկրտիչեան)
- Գրութեան ֆոյր (Հրուշան)
- Յրակն, Առեւ, վարժարանները (Ռուսնոց մը)
- Վարակումները-Առողջապահական (Նշան)
- Տղեր երեւոյթներ (Արամ)
- Ժողովրդական գիտելիքները :

«Համալսարան» ըստանորոգագրուելու համար թէ՛ Գահիրէէն և թէ՛ շրջակայ գիւղաքաղաքներէն գիւրութեան համար կրնան գիմել թերթիս Տնօրինութեան :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 6 ԱՊՐԻԼ 1900

7386	3423	6810	7466	796	766
654	344	377	1908	2120	2337
3076	4407	5455	6991	7869	7307
7702	7198	8574	8763	8210	9097
	9403	9550	9633		

Թուկէզ կառավարութեան պէտք եղած գումարը փոխ տալ առաջարկած են, Տէլա-կօսի երկաթուղոյն նկատմամբ իրաւարար ատենին կողմէ վճարուած տուգանքը վճարելու համար : Այս առաջարկը, Անգղիային երկրին վրայ ձեռք դնելէ բոլորովին արգելելու բնութիւնը ունի :

ԲՐԷԹՈՐԻԱՅԻ ԴԻՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Լրագիրները Լօրէնսօ-Մարքէզէն ստացուած հեռագիր մը կը հրատարակեն, որ կը հաստատէ թէ՛ Պօէրները Բրէթորիայի մէջ պաշտպանողական այնպիսի վիճակի մը մէջ են, որ երկու տարի տեւող պայարման մը ենթարկուելէ վերջ միայն տեղի կրնան տալ :

ՕԳՆԱԿԱՆ ԶՕՐՔԵՐ. — Մարտ 24

Թուականաւ Լօրէնսօ-Մարքէզէն առնուած առնուած հեռագրի մը նայելով, ներկայիս մէջ թրանսվալական իշխանութիւնները ինքզինքնին բոլորովին պատերազմելու նուիրած են և զօրածողովի շարժումներու մէջ են :

Ամեն ամիս Լօրէնսօ-Մարքէզէն անցնող Եւրոպացիներու խումբեր, որոց իւրաքանչիւրը 4—500 հոգիներէ կը բաղկանան, կերթան Պօէրներու զօրութեան միանալու : Ամէն շաբթու մէջ շոգենաները Պօէրներուն միանալու համար կամաւոր զօրքեր ցամաք կը հանեն :

ՊՕԷՐ ԳԵՐԻՆԵՐԸ. — Օռիան և Սիբի

օՒ-Քանկրիմ փոխադրանաւերը, մին 1130 Օրանտական և միւսը 800 մեծաւ մասամբ թրանսվալական գերիներով Սիմօնթօյն հասած են : Գերիները 13—70 տարիք ունեցող անհասներ են :

Կիմացուի թէ Սիբի-օՒ-Քանկրիմ փոխադրանաւեր թրանսվալցիները Սէնդ-Հէլէն պիտի տան :

ԱՅՐԻՔԱՆՏԷՐՆԵՐԸ. — Քափէն ստաց

ուած հեռագիրները կը յայտնեն թէ՛ հաշտութեան հակառակող լրագիրները կը պահանջեն որ Աֆրիքանտէրներու դէմ, որոնք Պօէրներու հետ միաբանած են, բուռն միջոցներ ձեռք առնուին :

Միևնոյն լրագիրները կը պահանջեն նաև որ Ազատ Պետութեան Պօէրները անհաւատարմներ նկատուին և անոնց ինչքերը կապտուին :

ՔՐՈՒՆՇԹԱՏ. — Հարաւ զրկուած

Պօէր շոկատներէն լուր մը չկայ թէ և, սակայն կը կարծուի թէ ապահովութեան մէջ են :

Լօպացիի կուռոյն մէջ Պօէրները չորս անգղիացի գերիներ ունեցան որոցմէ մին

տեղակալ էր : Զորս ձի, հրացաններ և 14 ռազմավթերքներու մնուող զրաւեցին :

Գրունշթաւի մէջ ամեն ինչ կարգին է և Օրանտիսթներուն արտօնուած է խմբովին հոն երթալու : Շատ թուով շոկատներ շարժման մէջ են : Նախագահին յայտարարութենէն կերևի թէ կառավարութիւնը անգրգռելի պիտի մնայ :

Նախագահ Սթէյն իւր յայտարարութեան մէջ, Պուրկէրներուն հրաման կուտայ զինուորական ծառայութեան համար եղած հրաւերին պատասխանելու : «Ինչ կերպով որ ալ ըլլայ ոչ ոք պիտի կրնայ օժանդակել անգղիացոց և ոչ ալ իրենց զէնքերը վար դնել, բայց միայն ստիպողական պարագայի տակ» :

Անոնք որ այս հրամաններուն չհետեւին, քրէական յանցանք գործած համարուելով, զինուորական օրինք ամենախիստ պատիժներու պիտի ենթարկուին :

ՅՐԱՆՍԱ. — Տամատ Մահմուտ փաշայի և իր երկու զաւակաց կողմէն, Հաճասի Գործակալութիւնը հետեւալ նամակին պատճէնը կը հաղորդէ Փարիզի թերթերուն :

Փարիզ 22 Մարտ

Պարոն Խմբագրապետ.

Պատիւ ունինք զեկուցանելու թէ՛ այն ծրագիրը, որուն իրագործմանը ջանալու նւիրած ենք ինքզինքնիս և որով Ձեր համակրալից աշակցութեանը արժանացանք, կը պարտաւորեցնէ զմեզ հեռանալ Փարիզէն :

Այն սիրալիւր ընդունելութեան և այն թանկագին աշակցութեան փոխարէն, զոր նուիրեցիք մեզ, առանց մեր ամենախորին շնորհակալիքը և ամենէն յուզիչ երախտագիտական արտայայտութիւններն՝ Փրանսական կառավարութեան, անոր ժողովուրդին և Ձեր երկրի մամլոյն ուղղելու, չենք ուզեր թողուլ Փրանսան, չենք կարող թուլլ Փարիզը :

Կը յուսանք, Պարոն Խմբագրապետ, թէ՛ դէպ ի Ձեր մեծ ազգն ուղղուած մեր այս համակրական արտայայտութիւնը, վերջ տիրի զնէ այնքան անախորժ և ցաւալի տարաձայնութիւններուն, որոնք պահ մը պիտի ձգտէին ենթադրել տալու թէ՛ իրենց հայրենիքի վերականգնման վեհ գործը նպատակակէտ ընտրած և անոր նուիրուած քաղաքական վտարանդիները, չեն կարող այլևս յուսադիր լինիլ այն աւանդական պատուոյ և ազատութեան վրայ, որոնք Փրանսան ա՛յնքան սիրելի դարձուցած են :

ԼԱ ՄԻՉՈՒՄԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՃԽԱՐՅԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԷՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ :

Այլսարհի մէջ գանուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յԱղէքսանգրիա :

ԵՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Փարիզ 26 Մարտ

Ի ՓԱՌՍ ԿԱՐԻՊԱՆՏԻ

Երևի կիրակէ տեղի ունեցած է Տիֆօն քաղքին մէջ Կարիպալտի արձանին բացման հանդէսը, որ խիստ փայլուն եղած է: Բազմաթիւ ժողովուրդ ներկայ կը գտնուէր հանդիսին, նախկին զինուորներու (1870ի պատերազմին մասնակցող) շատ մը ընկերութիւններ հոն ներկայ էին: Կարիպալտի ծնած քաղաքը ներկայացուած էր. Պ. Լիւծ-ժաթի և Չիֆրիանի ներկայ էին: Սէնի քաղաքապետութիւնը ներկայացուցիչներ զբերկեր էր: Վերջապէս՝ նախկին նախարարներ, ծերակուտականներ և շատ մը երեսփոխաններ ներկայ գտնուած էին:

Պր. Լէյլ կրթութեան նախարարը հիսուս ժամը Չին և հանդէսը տեղի կ'ունենայ ժամը 3ին և կը վերջանայ ժամը 5ին: Պաշտօնական բեմին վրայ կը տեսնուէին Ֆէրօն, Համէլ, Մուանտ Վորալտները և շատ մը սպաներ, խառնուած երեսփոխաններու, ծերակուտական և քաղաքական ուրիշ բարձրաստիճան անձնաւորութեանց հետ:

Երբ արձանին շինութեանը համար կազմուած յանձնախումբը շէնքը քաղաքապետութեան յանձնելու արարողութիւնն կատարեց, ներկայներու մէկ մասը «Կեցցէ՛ բանակը» գոչեց, ասոր վրայ փոքրիկ իրարանցում մը և խառնակութիւն մը պատահեցաւ և վեց հոգի ձերբակալուեցան:

Պր. Լէյլ և ուրիշ ութ հոգիներ ճառեր խօսեցան: Լէյլի ճառը շատ ծափահարուեցաւ, նախարարը Կարիպալտին ողջունեց հիացումով և ակնածութեամբ:

Ի ՅԻՇԱՏԱԿ ՎԱԹԷՐԼՈՅԻ

Ճրանասացի ժողովուրդը արձան մը կանգնելու ձեռնարկած է Վաթէրլոյի պատերազմին մէջ մեռնող Ճրանասացի զինուորներուն յիշատակին համար: Այս ձեռնարկին պծրագլուխն է Պր. Հանրի Հուսէ. արձանը պիտի բարձրանայ ճիշդ այնտեղ ուր ինկան Ճրանասացի երկու վերջին շոկատները: Ե՛նքը պիտի ներկայացնէ կոթող մը կրանիք քարէ որուն վրայ պիտի թառի արյոյրէ՛ արծիւ մը՝ մահու չափ վիրաւորուած և որ գեռ գրօջակը կը սպառնայ: Ճրանասացի աշխարհահռչակ քանդակագործը այդ շէնքը շինելու ձեռնարկած է միծեռնադով և արդէն օրինակը շիներ է կառով:

ՕՏԷՈՆ ԹԱՏՐՈՆԻՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՈՒՄԸ

Այս առաւօտ՝ շատ կանուխէն, Օտէոն թատրոնին բոլորտիքը հազարաւոր անձինք կանգ կ'առնուն, հոն փոխադրուող արգուզարները՝ նկարները, զգեստները տեսնելու համար: Յիբաւի խոշոր խոշոր կառքեր թէպէր Յրանսէի զարդարանքները Օտէոն կը փոխադրեն, վասնզի՛ ինչպէս մեր անցեալ թղթակցութեամբ ըսելու առիթը ունեցանք՝ այս շաբթուրէն սկսեալ Օտէոնը Գոմէսի Յրանսէի պիտի փոխուի ժամանակաւորապէս:

Ա. ՊԱՐՏԱՔ

ԳԱՀԻՐԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՀԱՄՊՈՒԹԿԻ, ՊՐՈՆՍՎԻԿԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՀԱՅՈՒԹԵԱՆՑ

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ երկար տարինսր վերոյիշեալ վիճակահանութեանց սոմսերու առեւտուրը քաղաքիս մէջ յաջողութեամբ շարունակելէ եւ կատարեալ փորձառութիւն ստանալէ վերջ, այս անգամ վերոյիշեալ սոմսերէն մեծ քանակութեամբ ապագրանք տուած է եւ յետ այսու մինչեւ ցարդ ծախուածներէն աւելի զեղջեալ գներով պիտի վաճառէ:

Իրեն զիտող գնորդները կատարելապէս գոհացնելու եւ մինչեւ ցարդ այս առեւտուրին շուրջ տեղի ունեցած զփգոնութիւնները բառաւուր համար մեծ հոգածութիւն պիտի ունենայ: Եւ անոնք որ Ա. Գլասի սոմսերը ունին իրենց քով, մինչեւ վերջին Գլասը լիաբերովը հանդերձ իրենց պիտի զրկուի, պահչած ժամանակին:

Իր կեդրոնատեղին է Մուսքի մէջ Պ. ԳՕՆՕ-ՄՕՅԻ Պանքան:

Սոյն սոմսերէն պիտի ծախուին նաեւ ի Մուսքի Տիար Գ. Պարզճեանի խանութիւն:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց սոմսերու գիները՝

- Համպուրկ՝ 7 Գլաս. իւրաքանչիւրը 13 1)2էն. — ամբողջ 94 1)2:
- Պրոնսվիկ՝ 6 Գլաս. իւրաքանչիւրը 16 զրուշէն. — ամբողջ 96:
- Հունգարական՝ 6 Գլաս. իւրաքանչիւրը 17 զրուշէն. — ամբողջ 102:
- ԾԱՆՕԹ. — Հունգարական սոմսերու Ա. Գլասի թիւերը արդէն հասած են եւ հրապարակ եղած:

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մինչեւ ցարդ սովորութիւնն չէ եղած կամ քիչ պատահած է, որ հայ թերթերու վարչութիւններն մտածած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Ստեպ կը պատահի որ այս ինչ կամ այն ինչ թիւը կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ մը ունենալ ցանկացողին կողմէ եւ գրեթէ գտնել անկարելի կըլլայ:

Մենք՝ «Արշալոյս» ի՛րատարակման ստալին օրէն մեր սպասումին քանակը ի նկատի ունենալով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաւաքածոյի համար աւելի տպագրել տուած եւ առաջին վեցամսեայն կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Արշալոյս» ի առաջին վեցամսեայն կազմուած ունենալ, կրնան զիմել թերթին ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ:

Լաթակազմին համար 10 Ֆրանքի գումար մը զրկելով մեզ:

Գարձեալ արտասահմանի ո՛ր եւ է թերթի բաժանորդ գրուել փափաքողներէն անոնք որ զիւրութիւնը չունին անոնք խմբագրութեանց հետ յարաբերութեան մտնելու, կրնան մեզի զիմել:

ՏՕՒԹՈՐ ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Ասամբլեայի Ապրիլ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակուաներ:

Կը դադարեցնէ վարկենապէս ակուայի ցուերը, ամերիկեան նորադոյն մեթօմով իւր պատրաստած դեղերովը:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր ընդունած ակուաներուն տոկոսնութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 3-5:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌ

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ

Օռօգի Պաֆ վաճառատան մօտերը, Կառէ-էլ-Պեհաքի Եիւս ղիմացը

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխառնալի պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ դաղդիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պաքսիմաթներ և այլն:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 42-50

ԿՈՊԷՌ ՊԵՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍՆԿԱՐԱՑՈՒՆ ԵՒ ՆԿԱՐԱՑՈՒՆ

Տասներկու տարինսր շարունակ կարեւոր լուսակարչատուներն մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ ճշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պօլսոյ մէջ Ապտուլլահ եղբարց ամս, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուներու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ ամանձին գործատեղի՛ մը կը հիմնէ Էգպէիլի Եարիա Գամիկ Օթէլ ՇէֆէրՏՍԻ ճիշդ զիմաց թիւ 3 արարթմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրք կուտփներ ի հարկին: Ակրանիսթրումն բնաջան մեծութեամբ:

Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով, որոնք երբէք չեն աւրուիր:

Գոճաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միմեաքիւր:

Իւզաներկ եւ ջրաներկ պատկերներ, եւլն:

Լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուր քու, Գեպթօրքումն եւլն:

Իրեն զիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միմեաքիւն գուրաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Գիմեցէ՛ք եւ կատարելապէս դո՛ս պիտի մնաք:

ԳԻՐՔ ՈՒՉՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Դասական, Դպրոցական, Գիտական, Գրական, Առուեսական, Բանասիրական, Վարկական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նուասարգեանի, Գալստեան վարժարան հայոց ի Գահիրէ: